

նումս, խնդաց եւ քաղցրութեամբ ըսաւ. «Մարկոս, եղբա՛յրս, մի՛ զարմանար որ զիս կը տեսնես առողջ եւ զօրաւոր: Միայն սորվէ իմ հրաշալի բժշկութեանս պատճառը, եւ ինձ հետ պիտի զարմանաս մեր Տիրոջ Քրիստոսի անջնջելի բարութեան վրայ, որ կրնայ առանց նեղութեան բժշկել ամենէն յուսահատական հիւանդութիւնները:

— Քառասուն օր առաջ, անտանելի ցաւով մը բռնուեցայ. բոլոր ոյժերս հաւաքեցի եւ ինքզինքս քաշքշեցի դէպի Գողգոթա, եւ հոն քարայտակին վրայ պառկեցայ. . . այն ատեն ցաւին պատճառած տեսակ մը մտեռանդութեամբ տեսայ խաչին վրայ զամուսած Փրկիչը, եւ անոր մէկ կողմը՝ աւազակներէն մին, միւս խաչին վրայ: Սկսայ աղաղակել եւ կրկնել բարի աւազակին խօսքը. «Յիշեա զիս, Տէր, յորժամ դայցես արքայութեամբ քով»:

Ի պատասխան իմ աղօթքիս, Փրկիչը ըսաւ աւազակին. «Ի՞ջիր խաչէն եւ ազատէ այս հիւանդը, ինչպէս դու ազատած էիր»: Աւազակը խաչէն իջնելով գրկեց զիս եւ համբուրեց: Յանկարծակի ոտքի ելայ, վազեցի մեր Փրկչին, եւ տեսայ որ ինքն իսկ իջած է խաչէն: Այն ատեն ցոյց տալով ինծի իր խաչը, ըսաւ ինձ. «Ընդունէ այս փայտը եւ պահէ զայն»: Ընդունելով այս թանկագին փայտը ու կրելով զայն, իմ մտեռանդութիւնս վերջ գտաւ: Այն պահուն իմ բոլոր ցաւերս փարատեցան եւ իմ հիւանդութենէս ո՛ր եւ է հետք չի մնաց» (L. S. S. էջ 19-23):

7. — Տիրոջ աջ բազուկը եւ Տիրամօր պաշկերք Գողգոթայի սիւնին վրայ (557). — Յուստինիանոսի հրամանաւ Տեառնընդառաջի տօնին փոփոխութեան առ-